

1767 2000000000

1000000000
1000000000

9(47.925)
S-45

1912

5 OCT 2011

Հրատարակ. Բ. Հ. Կուլտուրական Միության
Հրատարակչական Մասնաձեռնի—№ 25

Գ Բ Ե Յ Հ Ա Յ Ո Յ Պ Ա Յ Մ Ո Ր Թ Ե Լ Ե Ն Ց

№ 12

Հ Ա Յ Կ Ա Չ Ա Ն Ց

Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Գ Բ Ե Ց

Ի. Տ Ե Ր Չ Ա Չ Ա Ր Ե Ա Ն

Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА
Издательской Секции № 25

Очеркъ изъ армянской исторіи № 12
ДИНАСТІЯ ГАЙКИДОВЪ
Составиль И. Теръ-Газарянъ

Электротпечатня газ. „Баку“
Баку, 1912

9(47.995)
S-45

ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՑ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
 ՀԵՏԵԻՆԵԱԿ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. „Պատանեկան Գրադարան“ №№ 1—17
 Իւրաքանչիւր գիրքը —ր. 30 4.
 2. Хрестоматія—Ս. Մանդիկեանի — " 75 "
 3. Դիւան հայոց պատմութեան—Գիւտս ա. ֆ.
 Աղակեանի 4 " — "
 4. Բանաստեղծութիւններ — Յ. Յովհաննիս-
 տեանի 1 " 50 "
 5. Վերջ Հայաստանի—Խ. Արովեանի — " 50 "
 6. Վիշէր՝ Տէլլ—Վ. Օստրոգորսկու — " 5 "
 7. Ճրիւնի—Վ. Օստրոգորսկու — " 5 "
 8. Գործնական շերամապահութիւն—Կ. Մե-
 շիֆ-Շանկազարեանի — " 5 "
 9. Բամբակի մշակութիւնը — Ն. Տարակի-
 նովի (Թարգմանութիւն) — " 3 "
 10. Մանր վարկի հաստատութիւնները — " 5 "
 11. Բուսական աշխարհ—Կ. Մեշիֆ-Շանկա-
 զարեանի — " 5 "
- ԴՐՈՒԳՆԵՐ ՀԱՅ. ՊԱՏՄՈՒԹ. №№ 1—12**
12. Արաաչէս Երկրորդ—Վ. Փափագեանի — " 15 "
 13. Գազիկ Երկրորդ — " 15 "
 14. Վարդանանց պատերազմը — Առյնի — " 30 "
 15. Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ—Մ. Առա-
 փեղեանի — " 15 "
 16. Սահակ և Մեսրոպ—Վ. Փափագեանի — " 15 "
 17. Վահան Մամիկոնեան—Մ. Առափեղեանի — " 15 "
 18. Թորոս իշխան Վ. Փափագեանի — " 15 "
 19. Լևոն Երկրորդ — " 15 "

1324 220
 Հրատարակ. Բ. Հ. Կուլտուրական Միութեան
 Հրատարակչական Մասնաձիղի—№ 25

9(47.925) № 12
 ԴՐՈՒՂ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

S-45
 ԱՄԳ

ՀԱՅԿԱԶԱՆՑ
ԹԱԳԱԻՈՐՆԵՐ

Գ Ր Ե Յ

Բ. ՏԵՐ ԶԱԶԱՐԵԱՆ

Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА
 Издательской Секции № 25

Очеркъ изъ армянской исторіи № 12
ДИНАСТІЯ ГАЙКИДОВЪ
 Составиль И. Теръ-Газарянь

Электротпечатня газ. „Баку“
 Баку, 1912

ՀԱՅԿԱԶԱՆՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

1.

Հայաստանը Քրիստոսի ծննդից դեռ շատ առաջ գոյութիւն ունէր. մեր երկիրը այն ժամանակ դեռևս տարածութեամբ փոքր էր. ժողովուրդն էլ, համեմատած շրջապատող մեծ պետութիւնների ժողովուրդների հետ, քիչ: Ժողովրդի կառավարիչները առաջին ժամանակներում կոչւում էին նահապետներ, ապա, երբ երկիրը մի քիչ մեծացաւ՝ իշխաններ, սրանք մեր առաջին նահապետ Հայկից սկսած, որոց որդի ժառանգաբար իշխում էին:

Մեր երկրի հարաւային կողմում կար մի մեծ, ուժեղ և հարուստ պետութիւն, որը կոչւում էր Ասորեստան: Սրա թագաւորները շարունակ արշաւանքներ էին գործում գէպի Հայաստան, երկարատև պատերազմներ սղում, աւերում, թալանում, քաղաքներ ու գիւղեր կործանում, գետնին հաւասարեցնում և անազին քանակութեամբ գերիներ տանում հեաները էրենց երկիրը: Սակայն, որքան էլ հայերը թուով քիչ էին, միշտ էլ ուժեղ դիմադրութիւն էին ցոյց



1827 թ
41

տալիս, իրենց լեռների ամուր տեղերում՝ պահուելով, կարողանում էին ազատուել և՛ թշնամու հեռանալուց յետոյ, կրկին երկիրը մշակում էին, աւերակները վերականգնում, շէնացնում: Սակայն Ասորեստանի պատերազմասէր թագաւորների մղած կռիւները շատ երկար տևեցին, մինչև որ Հայաստանը գրեթէ ուժասպառ եղաւ: Վերջապէս, երբ Ասորեստանի Շամիրամ թագուհին չկարողանալով ստիպմամբ իւր ամուսինը դարձնել, մեր, իւր գեղեցկութեամբ հռչակուած Արա նահապետին, ցանկացաւ պատերազմում գերի վերցնել նրան, Արա գեղեցիկն ընկաւ, Հայաստանն էլ բաւական ժամանակ մնաց Ասորեստանցոյ իշխանութեան տակ:

Ասորեստանի թագաւորները մեր երկիրը կառավարում էին հայ վերակացուներով. սրանց պարտականութիւնն էր որոշած տարեկան հարկը ժողովել և հասցնել թագաւորի գանձարանին, իսկ երկրի ներքին կառավարութեան մէջ ազատ էին: Ասորեստանի իշխանութեան տակ էին գլուխում նաև Մարաստանը և Բաբելոնը, որոնք կառավարւում էին նոյն ձևով, ինչպէս և Հայաստանը:

Հպատակ ազգերից հաւաքուած հարկերը տարէցտարի ուղարկւում էին Ասորեստանի թագաւորի գանձարանը և հարստացնում, ձոխացնում արքունիքը: Թագաւորներն՝ անչափ հարըս-

տութեան տէր դառնալով, սկսել էին փարթամ, շռայլ կեանք վարել. շարունակ խնձոյքներում էին անցկացնում իրենց ժամանակը և չէին հետաքրքրւում պետութեան, հպատակ ազգերի գործերով: Թագաւորների այդ անհոգութիւնից շատ էին օգտուում պետութեան զանազան կառավարիչներն ու կուսակալները: Սրանք մեծ քանակութեամբ հարկեր էին ժողովում, ժողովրդին կեղեքում և հաւաքած հարկերի միայն մի մասն էին գարձարան ուղարկում, իսկ մնացածն իրենք գործադրում: Իրենց թագաւորների օրինակին հետևելով, սրանք էլ շռայլ, անկարգ կեանք էին վարում, միշտ մարմնական հաճոյքի մասին մտածում: Երկրի մէջ կարգ ու կանոնը, խիստ հսկողութիւնը չափազանց թուլացել էր. նախկին պատերազմասէր, քաջ ասորեստանցիք մեռել, գնացել էին. դրանց տեղը բռնել էին հարստութիւնից փչացած, թուլամորթ յաջորդները: Հսկայ պետութիւնը կամաց կամաց քայքայւում էր: Չուկը գլխիցն էր հոտել. ոչ թագաւորներն էին ուշք դարձնում այդ կործանման վերայ, ոչ երկրի միւս կառավարիչները: Այդպիսով պետութեան գանձարանի հարստութիւնը փոխանակ երկրի ծաղկմանը, զարգացմանը նպաստելու, ընդհակառակը կործանման պատճառ էր դառնում:

Հպատակ ազգերը, վաղուց նեղուած լինե-

լով անագին հարկերից, ատելութեամբ լցուել էին դէպի Ասորեստանը և յարմար ժամանակի էին սպասուում, որ կարողանան աղստամբել և ազատուել այդ դառն, լծից: Երկրի այդ անաէր, անտիրական դրութիւնը մի ձեռնտու հանգամա՞ք դարձաւ ճնշուած ազգերի համար, և այդ դրութիւնից կարողացան լաւ օգտուել զրեթէ բոլոր հպատակ ժողովուրդները, սրանց թուում նաև հայերը:

2.

ՊԱՐՈՅՐ ԱՌԱՋԻՆ ՊՍԱԿԱԿԻՐ ԹՄԳԱԻՈՐ ՀՍՅՈՅ

Ասորեստանի կողմից նշանակուած վերջին հայազգի կառավարիչն էր Սկայորդին: Ինչպէս երևում է, սա իւր կառավարութեան մէջ գրեթէ անկախ էր, մինչև այն աստիճան, որ երբ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին սպանում են և նորա երկու որդիքը՝ Ադրամէլէքը և Սանասարը փախչում Հայաստան, Սկայորդին՝ առանց երկիւղ կրելու նոր թագաւորից, նրանց պատուով ընդունում է և իւր երկրում բնակութեան տեղ տալիս. Սանասարին հարաւային կողմում՝ Սիւմ լեռան մօտերքը, իսկ Ադրամէլէքին՝ հարաւարևելքում: Սրա տոհմը ժամանակի ընթացքում բազմանում է և առաջ են գալիս Արծրունեաց և Գնունեաց նախարարութիւնները:

Սկայորդու որդին էր Պարոյրը, որ և հօր մահուանից յետոյ երկրի կառավարութիւնը ըստանձնում է: Ահա սրա ժամանակն է, որ Հայաստանն ընդմիջտ ազատուում է Ասորեստանի ծանր լծից: Պարոյրի կառավարութեան ժամանակ Մարաստանի վերակացուն էր մար Վարբակէս իշխանը. սա խորամանկ ու քաջ մարդ էր և լաւ հասկանում էր, որ արդէն ժամանակ է բռնութիւնից ազատուելու, մանաւանդ որ Ասորեստանում այդ ժամանակ իշխում էր Սարգանապար: Սա իւր նախորդներից աւելի շոայլ կեանք էր վարում. ամբողջ օրերով փակուելով կանանոցում ցոփութեան ու զեղխութեան էր էր տուել իրեն. մինչև անգամ կանանց զգեստներ էր հագնում, երեսին սնգոյր (սիւրմա, ներկ) էր քսում և այլ քնքշութիւններ էր բանեցնում: Նրա այդ անվայել ընթացքին ականատես էր եղել Վարբակէսը, երբ մի անգամ պաշտօնական զործով եկել էր Նինուէ ու մտել թագաւորի մօտ: Թուլամորթ ու շոայլ թագաւորի խայտառակ կեանքը նրան աւելի ևս համոզել էր, որ իւր մտածած ծրագիրը յաջողութիւն կարող է ունենալ:

Վարբակէսը վերադառնալով Մարաստան սկսում է գաղանի կերպով մեղացիներէից զօրք հաւաքել և զանազան իշխանների իւր կողմը գրաւել: Սակայն միայնակ նա չէր կարող ապրս-

տամբուլիւնը յաջողութեամբ գլուխ բերել: Նա լաւ տեսնում էր, որ հայերն էլ վաղուց զգուած են Ասորեստանի լծից և որ Պարոյրը, իբրև հրամուտ և ուժեղ կառավարիչ, կարող է մեծ օգնութիւն տալ իրեն, ուստի և սրա հետ գաղտնի դաշն է կապում այն պայմանով, որ միասին յարձակուեն Սարգանապալի վրայ և, եթէ յաղթեն՝ ոչ միայն Հայաստանը անկախ երկիր դառնայ, այլ և Պարոյրը թագաւորական թագ ստանայ. մի բան, որ մինչև այդ հայ իշխանները չէին ունեցել: Վարբակէսը իւր կողմն է գրաւում նաև Բաբելոնի կուսակալին:

Երբ ամեն բան պատրաստ էր, միացեալ երեք կուսակալները յարձակում են Ասորեստանի վրայ: Յարձակումը շատ անսպասելի էր և շփոթութիւն առաջ բերեց Նինուէնում՝ Ասորեստանի մայրաքաղաքում: Նինուէն մի ճոխ, գեղեցիկ շէնքերով զարդարուած և հարուստ քաղաք էր, շրջապատուած ամուր պարիսպներով և բարձր աշտարակներով: Ամեն ազգի վաճառական անագին քանակութեամբ կարաւաններով բազմատեսակ ապրանքներ էր բերում հեռաւոր երկիրներից: Քաղաքի միջով հոսում էր Տիգրիս գետը:

Սարգանապալը պալատականների ստիպմամբ զօրքի գլուխն անցաւ և դուրս եկաւ թշնամու դէմ, բայց մեծ ջարդ կերաւ ու յետ փախաւ քաղաք,

դռներն ու դարպասները փակուեցին, և սկսուեց Նինուէի պաշարումը: Չնայելով այդ պաշարուած դրութեան, Սարգանապալը կրկին իւր հին սովորութիւններն էր բանեցնում, կերուխումի և զուարճութիւնների ետևից ընկած, ուշք չէր դարձնում, թէ ինչպէս է պաշտպանում քաղաքը: Նա հաւատացած էր, թէ Նինուէն այնքան հարուստ է, որ երկար տարիներ կարող է ուտելիք մատակարարել քաղաքին, ջուրն էլ միշտ կար. Տիգրիսը քաղաքի միջով էր անցնում:

Պաշարումը տևեց երեք տարի անընդհատ. թւում էր, թէ քաղաքն անկարելի է առնել: Սակայն, երբ Տիգրիս գետը, առատ անձրևներից յորդացաւ, բարձրացաւ և ողողեց շրջակայքը, քաղաքի հաստ պարիսպներից մէկի հիմքը խախտուեց և պարսպի մի մասը փլուեց: Պաշարողներն անմիջապէս օգտուեցան յաջող առիթից և այդ անցքից ներս խուժեցին քաղաքը: Վախկոտ թագաւորը, փոխանակ սրով դիմադրելու թշնամուն, իւր գանձերով, կանանցով ու ծառաներով յուսահատուած ընկաւ կրակի մէջ ու այրուեցաւ, անհետացաւ: Հրաշալի պալատը հրոյ ճարակ դարձաւ: Վարբակէսը իւր խոստման համաձայն Պարոյրին թագաւորական թագ տուեց և Հայաստանն անկախ թագաւորութիւն ճանաչեց: Նա Ասորեստանում վերակա-

ցու-կառավարիչ թողեց, իսկ ինքը վերագարձաւ Մարաստան: (Այս եղաւ 606 թ. Ք. ա.)

Պարոյրը Հայաստանում, իբրև անկախ պետութեան: մէջ նոր կարգեր է հաստատում, երկիրը խաղաղ կառավարում է երկար ժամանակ և ապա մեռնում: Սրան յաջորդում է իւր որդին, որը կրակոտ պայծառ աչքեր ունենալուն համար կոչուում է Հրաչեա:

Բարեւոնն իբրև ազատ պետութիւն, վաղուց պատերազմներ էր մղում հրէաների Յուդայի թագաւորութեան դէմ և աշխատում էր իւր իշխանութեան տակ ձգել: Հրաչեայի ժամանակ Բարեւոնի թագաւորն էր Նաբուգոդոնոսորը, որն արշաւում է Յուդայի թագաւորութեան վրայ: Սրան միանում է նաև մեր Հրաչեա թագաւորը և յաղթութիւնից յետոյ բազմաթիւ գերիներ է բերում Հայաստան՝ մի կողմից երկրի հպատակների թիւն աւելացնելու, միւս կողմից՝ վաճառկանութեանը զարկ տալու: Հրէայ գերիների մէջ կար մի նշանաւոր իշխան՝ Շամբաթ անունով, որին պատուաւոր տեղ է տալիս: Սրա տոհմը հետզհետէ բազմանում է և կազմում է Բագրատունեաց նախարարութիւնը, որ մի ժամանակ հայոց թագաւորների զլխին թագ դնելու, պսակելու իրաւունքն ունէր, իսկ Արշակունեաց հարստութեան անկումից յետոյ, արաբների արշաւանքների ժամանակ, Հայաստանում մի նոր թագաւորու-

թիւն է հաստատում՝ իրեն համար մայրաքաղաք դարձնելով Անին, որի աւերակները կան այսօր էլ:

Հրաչեային յաջորդում են մէկը միւսի ետեւից 6 թագաւորներ՝ Փառնուաս, Պաճոյճ, Կոռնակ, Փառոս, Միւս Հայկակ, Երուանդ Սակաւեաց: Սրանց ժամանակ, երևում է, երկիրը խաղաղ է եղել, ծաղկել է և նշանաւոր պատերազմներ չի ունեցել. մեր պատմահայր Մովսէս Սորենացին միայն օրանց անուններն է յիշում: Նորակազմ թագաւորութեան համար այդ խաղաղութեան տարիները շատ օգտակար էին և անհրաժեշտ:

3.

ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

Անցել էր բաւական ժամանակ. Հայաստանը խաղաղուել և սկսել էր ծաղկել. ժողովուրդը, շունչ քաշելով Ասորեստանի արիւնաքամ պատերազմներից, պարապում էր իւր առօրեայ աշխատանքովը՝ վար ու ցանքով, անասնապահութեամբ: Երուանդ Սակաւեացի որդի Տիգրան Երուանդեանը աւելի ևս նպաստեց ժողովրդի և երկրի բարգաւաճմանը: Իւր խելօք կառավարութեամբը և քաջութեամբն այնպէս մեծ

տպաւորութիւն էր թողել իւր ժամանակակից-
 ների վրայ, որ ժողովուրդը նրան իւր սիրած
 հերոսների շարքն էր անցկացրել, վրան երգեր
 էր յօրինել, խաղեր էր կապել: Ժողովուրդը իւր
 երգերում գովում էր իւր սիրելի թագաւորի և
 արտաքին՝ մարմնական և ներքին՝ հոգեկան գե-
 ղեցկութիւնները, ամեն կողմից նա վայելուչ,
 ազդեցիկ ու գրաւիչ էր: Շէկ ու գանգուր մա-
 զեր ունէր, գէմքի գոյնը հաճելի, աչքերն՝ ա-
 նոյշ, թիկունքը լայն ու արձակ, «կերուխումի
 մէջ պարկեշտ, ասում էր երգերում, և ցան-
 կութիւնների մէջ չափաւոր. մեծիմաստ և պեր-
 ճախօս, և մարդկութեան ամեն հարկաւոր բա-
 ների մէջ պիտանի: Արդարադատ և հաւասարա-
 սէր լինելով, ոչ լաւերին էր նախանձում և ոչ
 նուաստներին արհամարհում. այլ ամենքի վրայ
 էլ անխտիր տաքածում էր իւր խնամքը»:

Իբրև հմուտ կառավարիչ ու ռազմագէտ,
 Տիգրանը իւր ժամանակի պահանջները լաւ հաս-
 կացել էր: Նա տեսնում էր, որ Հայաստանի
 խաղաղութեան և բարգաւաճման համար անհրա-
 ժեշտ է հայ զօրքը կարգաւորել, երկրի պաշտ-
 պանութեան գործը կանոնաւոր հիմքի վրայ
 դնել:

Հայոց զօրքը մինչև այդ մեծ մասամբ հե-
 տակ էր և թոյլ զրահաւորուած: Տիգրանը նախ
 զօրքի մի մասը դարձնում է ձիաւոր, Հայաս-

տանի հրաշալի նժոյգները հեծած, պղնձէ զրահ-
 ներով՝ վահաններով, սաղաւարտներով ու գան-
 գապաններով պաշտպանուած զօրքը թշնամու-
 վրայ մեծ տպաւորութիւն էր թողնում: Մինչև
 այդ զինւորներն ունէին նետ, նիզակ պարսասիկ,
 քարեր նետելու համար. այնպիսի զէնքեր, ո-
 րոնք շատ հին ժամանակից մեր նախնիքները
 գործադրում էին. այժմ նա զինւորներին երկա-
 թէ սուր ու նիզակ է տալիս, պղնձէ վահան ու
 լանջապանակ: Հեծեալ զօրքին լաւ զինելուց յե-
 սոյ կարգ ու կանոնի տակ է դնում, հրամա-
 յում է վարժեցնել պատերազմական զանազան
 պահանջներին: Տիգրանի մտքած բարեփոխու-
 թիւնները մեր երկրի համար մեծ նշանակու-
 թիւն են ունենում, շրջակայ պետութիւնները
 տեսնում են, որ Հայաստանը դարձել է արդէն
 կանոնաւորուած ու լաւ պաշտպանուած մի պե-
 տութիւն, և այլևս չեն համարձակում յարձա-
 կումներ գործել, ինչպէս առաջները, աւելի
 շուտ դաշն են կապում, վախենալով Տիգրանի
 ոյժից:

Երբ Տիգրանը բաւականաչափ պատրաստ-
 ւել էր, Արամ իշխանի նման, արշաւանք սկսեց
 գէպի արևմուտք. Փոքր Ասիայի յունական գա-
 ղութիւնները: Հայկական զօրքը յաջողութիւն է
 գտնում գրեթէ ամեն տեղ. մանր ցեղերը մէկը
 միւսի ետևից ընկճում և հպատակութիւն են

յայտնում: Տիգրանը վերադառնում է այդ արշաւանքներից անթիւ գանձերով, հետը բերելով և գերիներ, որոնց բնակեցնում է Հայաստանի զանազան կողմերում: Հայ ժողովրդի դրութիւնը սկսում է աւելի ևս դէպի լաւը փոխուել: Մինչդեռ առաջներում հայերը ստիպուած էին օտարներին շարունակ հարկ տալ, ժողովրդի արիւնքրահինքի աշխատանքն ուղարկւում էր օտար երկիր, այժմ այդ բոլորը մնում էր երկրի մէջ: այդ դեռ բաւական չէ, այժմ Տիգրանի նուաճած երկիրներից էլ էր հարկ գալիս հայ թագաւորի գանձարանը: Ժողովուրդը հարկերի ծանրութիւնից թեթևանում է, սկսում է աւելի ևս յառաջադիմել: Խելացի թագաւորը չի շլանում իւր գանձարանի ճոխութիւնից և իրեն շռայլութեան, ճոխ կեանքի չի նուիրում. ընդհակառակն, այդ հարստութիւնը նա գործարքում է զօրքի սպառազինութեան ու ճանապարհների կանոնաւորման համար. քաղաքներն ամրացնում է բերդերով, պահապան զօրքեր է նըշանակում երկիւղալի տեղերում և հայերն սկսում են ապահով կերպով վաճառականութեամբ զբաղւել:

Այնպէս հարստանում է երկիրը, որ այլևս դժուար էր ազբաւանների պատահել. ամեն ոք աշխատանք ունէր, ամեն ոք իւր գործի արդիւնքի տէրն էր: Խաղաղութեան մէջ ժողովուրդը

օր է ցօր աւելի էր հարստանում. վաճառականներն այժմ օտար երկիրներից ոչ միայն հասարակ զգեստներ, ուտելիք և խմելիքի առարկաներ էին բերում, այլև աւելի ճոխ, թանկագին կրտորներ, դիպակ ու կերպաս, ոսկէ և արծաթէ զարդեր: Այդ ճոխ զգեստները հագնելով ու զարդարուելով տգեղն անգամ գեղեցիկ էր երեւում, ասում է պատմիչը: Ուրախ էր թագաւորը, տեսնելով իւր ժողովրդի զարգացումը, ուրախ ու գոհ էր և ժողովուրդը, որ այդպիսի քաջ և իմաստուն թագաւոր ունի: Տիգրանի քաջութեան, Հայաստանի ծաղիկելու համբաւը հասնում էր հեռուները և շրջակայ պետութիւններն աշխատում էին նրան իրենց կողմը դրաւել խաղաղութեան դաշն կապելով հետը:

Այդ պետութիւնների մէջ ամենից ուժեղն ու մեծը Մարաստանն էր, որ վարքակէսի ձեռքով ազատուելուց յետոյ, մեծացել և ճոխացել էր: Մարաց իշխանութեան տակ էր գտնւում և Պարսկաստանը, որի ժողովուրդը երկրի կառավարիչների հարստահարութիւններից զգուած, վաղուց դժգոհութեամբ յցուած էր Մարաստանի դէմ: Այդ ժամանակուայ Մարաց թագաւորն էր Աժդահակը, որը երազներին հաւատացող, շարունակ մոգերով շրջապատուած, տեսլքների բացարութիւնների հիման վրայ էր կառավարում երկիրը: Աժդահակի դուստր Մանդանան

հօր պահանջի համաձայն ամուսնանում է մի պարսիկ իշխանի հետ, որից ունենում է մի որդի՝ Կիւրոս անուամբ: Երբ Կիւրոսը մեծանում է, զբժ-
 փոս պարսիկների գլուխն անցնելով ապստամ-
 բում է իւր պապի՝ Աժդահակի դէմ և Պարսկաս-
 տանն ազատում: Հէնց այս Կիւրոսը, որը դեռ
 առաջներում ծանօթ էր Տիգրանի հետ և իւր
 խելքով ու ճարպիկութեամբ դուր էր եկել նը-
 րան, այժմ իւր նոր ազատած երկրի ապահո-
 վութեան համար գաղանի կերպով դաշն է կա-
 պում Տիգրանի հետ:

4.

Մարաց Աժդահակը հեռուից լաւ տեսնում էր, թէ ինչ էր կատարւում իւր հարեան պե-
 տութիւնների մէջ. թէ ինչպիսի փոթորիկ էին
 պատրաստում իւր համար Կիւրոսն ու Տիգրանը:
 Աժդահակը խիստ անհանգստանում է. նրա քու-
 նը փախչում է աչքերից, գիշերները հանգիստ
 չի կարողանում քնել. օր ու գիշեր այն միտքն
 էր տանջում նրան, թէ ինչ վտանգ կարող է
 գալ երկու քաջ թագաւորների բարեկամութիւ-
 նից: Շարունակ փակուելով իր սենեակում ե-
 րազ մեկնողների ու մօզերի խորհուրդներն էր
 հարցնում գալիք չարիքի առաջն առնելու համար:
 Ահա և մի մութ գիշեր է. հոյակապ պալա-

տում քնած են բոլորը, բացի պահապաններից,
 որոնք զինուած անդադար շրջում են պալատի
 շորս կողմը: Խոր լուսթիւն է տիրում դուրսը,
 ամեն ինչ մեռած է և կէս գիշերուայ խաւարը
 թանձր ու սև քօղով պատել է ամբողջ աշխար-
 հը: Յանկարծ պալատում, թագաւորի ննջարա-
 նում լոյս է երևում. ձայներ են լսում և կար-
 ծես մի տեսակ իրարանցում է սկսում ներսը:
 Աժդահակն է այդ կէս գիշերային քաղցր քունը
 վրդովողը. կանչում է իւր սենեկապետին և
 հրամայում, որ անմիջապէս իւր մօտ բերեն
 ազնւատոնմ խորհրդականներին և մօզերին, սս-
 տղագէտներին: Անսովոր երևոյթ էր այդ. երբէք
 կէս գիշերին խորհրդականներին կանչած չէր
 Աժդահակը. այդ տարօրինակ և անժամանակ հրա-
 մանն աւելի է յուզմունք ու շփոթ առաջ բե-
 րում պալատում ու ծառաների մէջ: Ամեն մէկը
 մի տեսակ ենթադրութիւն է անում. ամեն մէ-
 կը մի տեսակի բացատրութիւն է տալիս. շուկն
 ընկնում է պալատը և մի տեսակ անակնկալ վը-
 տանգի երկիւղով պատում ամեն ինչ: Ոչ ոք,
 իհարկէ, չի համարձակւում այդ տարօրինակ ե-
 րևոյթի պատճառը հարցնել թագաւորից, որ իւր
 սենեակում փակուած լուռ նստած է ու մտա-
 ծում է, անվերջ մտածում: Նրա երևակա-
 յութիւնը խախտուել է, շարունակ տեսիլներ,
 սարսափեցնող պատկերներ է տեսնում ու



վրդովուած հոգին աւելի է ալեկոծւում: Ծառաներն անմիջապէս կատարում են թագաւորի հրամանը: Ահա ազնուականների ու մոգերի տների առաջ շահերով, լուսաւորուած զինուորները ձեծում են դուռը: Քնից վեր թըռած ազնուականի ծառան սարսափահար բաց է անում դուռը և իմանալով թագաւորի հրամանը, իւր ափրոջն արթնացնում է՝ պալատից եկած կարգադրութիւնը յայտնելով: Արագութեամբ հազնում են իրենց պաշտօնական զգեստները, նշանները ձգում և զինուորների ուղեկցութեամբ պալատ շտապում: Խորհրդականներից ամեն մէկըն էլ իւր հերթին ինչ որ վատ բան է դուշաւորում ու պալատ հասնելով այնտեղ եղողից ուղում է իմանալ անժամանակ խորհրդի պատճառը, բայց չի կարողանում որոշ բան լսել: Մի երկու ժամուայ մէջ ողջ բազաքը լցւում է շուկինբով, մոգերն ու խորհրդականները հետզհետէ պալատ են հաւաքւում:

Խորհրդարանի գահիւճը լուսաւորւում է, ամեն ինչ կարգի է բերւում, նստարանները շարւում են, ծառաներն իրենց տեղը բռնում, ներս են մտնում ալեգարդ ու պատկառելի խորհրդականները, իմաստուն մոգերն ու աստղագէտները, ամեն մէկը իւր համար որոշած տեղն է բռնում: Ամեն ինչ մոայլ է, ամեն ինչ խորհրդաւոր է այդ կէս զիշերային ժամին: Վերջա-

պէս ներս է մտնում քնից զրկուած, գունատ ու անհանգիստ թագաւորը: Պատշաճ ողջոյնն ստանալուց յետոյ, նա բարձրանում, բազմում է իւր արքայական գահի վրայ, և մեռելային լուսթիւն է պատում չորս կողմը: Նստած է թագաւորը շրջապատուած իւր մեծանուն խորհրդականներով ու լուս է, չի խօսում, և ոչ մի բան չի արտասանում. և այդ լուսթիւնը տևում է չորս ժամ անընդհատ: Տպաւորութիւնն աւելի է սաստկանում ինչ որ անակնկալ վտանգի մասին այլ ևս կասկած չէ մտնում: Ծանր է շնչում թագաւորը, մի տեսակ անորոշ հայացքը մի կողմ ուղղած, նայում է մտամոլոր: Ո՞վ կհամարձակուի առանց թագաւորի հրամանի խօսել, որքան և սրտամաշ, ճնշող էր լուսթիւնը, որքան և ժամանակը դանդաղ էր անցնում, բայց և խորհրդաւոր լուսթիւնը ոչ ոք չէր վրդովում:

Վերջապէս թագաւորը լուսթեանը վերջ է տալիս, սկսում է խօսել և բացատրել իւր անժամանակ հրաւիրած խորհրդի նպատակը: Գարձեալ երազն էր պատճառը, դարձեալ տեսիլը՝ անհանգստութեան առիթը, քունը վորցրած թագաւորն այնքան սարսափահար էր եղել այդ երազից, որ չէր կարողացել մինչև առաւօտ սպասել ու կանչել էր իւր խորհրդականներին: Նա պատմում է այսպէս. «Այս գիշեր, սիւ սիրելի խորհրդականներ, երազ տեսայ. լուս էր, թէ

ես գտնուում եմ ինչ որ ինձ անյայտ երկրում.
 ինձ, կարծես, ասում էին, որ այդ Հայաստանն
 է: Հեռուում երևում էր մի բարձր, մեծ, ձիւնա-
 պատ գագաթով սար: Այդ սարի գագաթին տես-
 նում եմ անա նստած մի՛ բարձր հասակով, գե-
 դեցիկ աչքերով, կարմիր այտերով, սիրունատես
 ու վայելչակազմ կին: Նա բռնուած էր ծննդա-
 բերութեան ցաւով: Ես հիացած էի կնոջ գե-
 դեցիկութեամբ ու երկար ժամանակ նայում էի՝
 տեղս կանգնած: Յանկարծ տեսայ, որ այդ կի-
 նը երեք կտրիճներ՝ դիւցազներ ծնեց, մէ-
 կը միւսից աւելի գեղեցիկ ու հասակով: Նը-
 րանցից առաջինը նստեց մի կատաղի առիւծի
 վրայ ու քամու արագութեամբ սլացաւ դէպի
 արևմուտք. երկրորդը թռաւ մի ընձի վրայ ու
 սլացաւ դէպի հիւսիս. իսկ վերջինը նստեց մի
 վիթխարի վիշապի վրայ, որի քթածակերից կը-
 րակ էր թափում ու սարսափելի տպաւորու-
 թիւն էր թողնում: Վիշապի վրայ նստողը յար-
 ձակուեց ինձ վրայ: Այնուհետև տեսնում եմ,
 որ գտնուում եմ իմ արքունիքի տանիքում, ա-
 մեն ինչ այստեղ զարդարուած է գեղեցիկ կեր-
 պով՝ հրաշալի շաարուաններով, գեղեցիկ ծաղիկ-
 ներով: Ես ձեզ հետ միասին մեր իմաստուն
 աստուածներին պաշտօն էինք մատուցանում,
 զոհ էինք անում ու պատուում: Յանկարծ երե-
 ւում է այդ վիշապի վրայ նստած դիւցազնը և

ուզում է յարձակուել մեր աստուածների վը-
 րայ ու ոչնչացնել: Ես անմիջապէս առաջ եմ
 նետուում պաշտպանելու. և մեր մէջ սկսում է
 մի անեղ պայքար. ծանր էր կռիւը և երկարատև:
 Մենք սկսեցինք նիզակներով կռուել. շատ արիւն
 թափեց և պալատի տանիքը ներկուեց այդ
 արիւնով: Կռիւը զնալով աւելի սաստկացաւ.
 մենք փոխում էինք մեր զէնքերը, բայց երկար
 ժամանակ չէինք կարողանում միմեանց յաղթել:
 Սակայն էլ ի՞նչ կարիք կայ բոլոր մանրամաս-
 նութիւնները պատմելու. վերջի վերջոյ ես յան-
 թուեցի ու ընկայ, և հէնց այդ ըոպէին էլ վեր
 թռայ քնատեղիցս: Սաստիկ յոգնած էի, քրքա-
 նած: Տեսելիքը անեղ էր և խորհրդաւոր:

«Այժմ, անշուշտ, դուք իմ պատմածից հաս-
 կացաք, որ այս երազը աստուածներն են ու-
 զարկել և այսպիսով ցոյց են տալիս մեծ ապա-
 գայի գաղտնիքը: Այն դիւցազնը, որ վիշապի
 վրայ նստած իմ դէմ պատերազմի ելաւ, ոչ այլ
 որ է, եթէ ոչ հայոց Տիգրան թագաւորը: Ան-
 կասկած է, որ նա մեր երկրի վրայ պէտք է յար-
 ձակուի. ուրեմն հարկաւոր է, որ մենք առա-
 ջուց պատրաստութիւն տեսնենք, չարիքի առաջն
 առնելու համար, թէ չէ կորած ենք ամենքս
 էլ, մեր երկիրն էլ մեզ հետ: Աստուածների
 օգնականութիւնը միշտ մեզ հետ է, նրանց ի-
 մաստութիւնը մեզ կառաջնորդէ. բայց կուզէի,

որ դուք էլ ձեր խորհրդով հնար ցոյց տայիք այդ վտանգը մէջ տեղից հեռացնելու»:

Թագաւորին լսելուց յետոյ մի առժամանակ լուռ թիւն տիրեց. բոլորի դէմքի վրայ էլ խաղաղութիւն երևաց, մի քիչ ազատ շունչ քաշեցին այդ գիշերուայ ծանր տպաւորութիւնից յետոյ: Խորհրդականներն այն կարծիքը յայտնեցին, թէ ամենից կտրուկ և լաւ միջոցն է զօրք ժողովել ու յանկարծակի յարձակուել Տիգրանի վրայ, քանի որ նա ոչինչ չգիտէ և անպատրաստ է: Լսեց թագաւորը խորհրդականներին մինչև վերջը համբերութեամբ և երբ ամեն ոք իւր կարկարծիքը յայտնեց, ինքն այսպէս խօսեց.

«Ձեր առաջարկը թէ ուղիղ է և խելացի, և թէ մեզ համար պատուաբեր. բայց դուք մոռանում էք մի բան, որ այս դէպքում մեծ նըշանակութիւն ունի: Դուք մոռանում էք, որ Տիգրանը միայնակ չէ, որ նա դաշն է կապել Կիւրոսի հետ և երբ պատերազմ սկսենք, երկուսը միասին կեղնեն մեր դէմ: Չէ որ մեր զօրքը չի բաւականանայ երկուսի դէմ միաժամանակ կռուելու: Կիւրոսը դեռ այնքան զօրեղ չէ, ինչքան Տիգրանը. նրան կարելի է գէնքի ոյժով ընկճել. իսկ Տիգրանը: Չէ որ նրա զօրքը այժմ կանոնաւորուած, կարգի տակ է գրուած ու լաւ սպառազինուած և սրքան էլ մարդուել է իւր տարած յաղթութիւնների մէջ: Իմ կարծիքով»

աւելի լաւ է այս դէպքում երկու ճանապարհով միաժամանակ գործել. մի կողմից զօրքը կազմ ու պատրաստ պահել, միւս կողմից խորամանկութեան դիմել: Աւելի լաւ է բարեկամութիւն հաստատենք Տիգրանի հետ, մտերմանանք և այն ժամանակ հնար կը լինի կամ նրա զօրավարներին կաշառել և նրան թունաւորել տալ, կամ գինուորներին կաշառել, որ սպանեն կամ միայնակ ժամանակ գերի բռնեն:

«Իսկ ի՞նչ աւելի յարմար միջոց կայ մօտիկ յարաբերութիւն հաստատելու, քան նրա գէղեցիկ ու իմաստուն քրոջը՝ Տիգրանուհուն կնութեան ուղելը: Թուղթ գրենք հէնց այժմ ու խնդրենք Տիգրանուհուն ինձ կնութեան, ահա իմ առաջարկը»:

Խորհրդականները գովեցին թագաւորի իմաստութիւնը, բոլորն էլ նրա առաջարկը ամենից օգտաւէտը համարեցին և որոշեցին անմիջապէս գրել թուղթը: Մինչդեռ նրանք այսպէս խորհուրդ էին անում, մտածում էին, արդէն լուսացել էր, ամեն ինչ շունչ, կենդանութիւն էր ստացել. գիշերուայ հետ կորան և խաւար մտքերն ու արևի հետ բոլորի մտքերն էլ լուսաւորուեցան, պայծառացան:

Արքայական դիւանատան գլխաւոր գրագիրն առաւ գրութեան համար անհրաժեշտ իրերը և թագաւորի բերանից գրեց հայոց

Տիգրան թագաւորի անունով հետեւեալ նամակը:

«Գիտէ քո սիրելի եղբայրութիւնը, որ այս աշխարհում աստուածները մեզ աւելի թանկ բան չեն տուել, քան բարեկամներն են, որոնց թիւը որքան բազմանայ, այնքան աւելի լաւ է, մանաւանդ երբ դրանք իմաստուն և հզօր են: Այդ կերպով մենք ազատ կմնանք, և դրսից որևէ խռովութիւն չի կարող ներս մտնել մեր երկիրը: Իսկ եթէ մտնի էլ, շուտով կոչնչանայ, որովհետև բարեկամները կարգելեն այն, կօզնեն մեզ ու կպաշտպանեն: Ներսում էլ չի կարող խռովութիւն ծագել, որովհետև բարեկամը բարեկամի դէմ չի ելնիլ, ոչ էլ կմասնակցի այդ տեսակ խռովութեան: Այսպիսով թէ՛ դրսից, թէ՛ ներսից ազատ ու հանգիստ կապրի մարդ: Այդ իսկ պատճառով, տեսնելով, որ բարեկամութիւնից օգուտ է առաջ գալիս, ուզում եմ, որ այն սէրը, որ արդէն մեր մէջ կայ, աւելի ևս ամրացնենք և այդպիսով թէ՛ մենք ազատ կմնանք, թէ՛ մեր տէրութիւնը անվտանգ: Մեր այդ բարեկամութիւնը կարելի է հաստատել այն ժամանակ, երբ դու կնութեան կտաս ինձ Մեծ Հայաստանի իմաստուն և չքնաղ օրիորդ Տիգրանուհուն՝ քո քրոջը, որին բարի ես ցանկանում միշտ: Նա կը լինի իմ պալատում տիկնանց տիկին, առաջին թագուհի և մեր ամենքի

սիրելին: Ո՛ղջ եղիր, մեր թագակից և սիրելի եղբայր»:

Այս գիրը պատրաստելուց յետոյ թագաւորը հրամայում է իւր իշխաններից մէկին առնել այդ թուղթը, վերցնել ծառաներ, արքայավայել պատրաստութիւններ տեսնել, առնել մեծամեծ ընծաներ, շքեղ զգեստներ, թանկագին քարեր, կերպաս ու դիպակ Տիգրանի, նրա կնոջ թագուհի Զարուհու, Տիգրանուհու և պալատական միւս նշանաւոր ազնուականների համար և գրեալ Հայաստան:

5.

Մինչդեռ մարաց արքունիքում շփոթութիւն ու յուզմունք էր տիրում, պալատականներն ու թագաւորը օր ու գիշեր մութ գործերի նախապատրաստութիւն էին տեսնում, դաւեր լարում հայոց թագաւորի դէմ, ուրախ էր անցնում հայոց պալատում Տիգրանի, իւր ընտանիքի և ազնուականների կեանքը. ժողովուրդը խաղաղ, հանգիստ իւր գործով էր զբաղւում. ամեն ինչ իւր տեղն էր:

Ահա մի օր էլ յայտնուեցին Աժգահակի դեսպանները՝ ահագին գանձերով բեռնաւորուած Տիգրանի պալատի առաջ ու յայտնեցին իրենց ով լինելը: Տիգրանը որ իմանում է, թէ Աժ-

դահակի կողմից դեսպաններ են եկել, հրամայում է վայելուչ ընդունելութիւն ցոյց տալ, սենեակներ յատկացնել, յարմարութիւն տալ, որ հանգստանան ճանապարհի յոգնածութիւնից: Հետեւեալ օրը նա հրաւիրում է իւր պալատական խորհրդականներին մեծ դահլիճը. տօնական փառաւոր զգեստներով զարդարուած, ինքը նըստում է իւր արքայական գահը և ապա հրամայում է ներս հրաւիրել Աժդահակի դեսպան ուղարկած իշխանին: Դեսպանը ներս մտնելով խոնարհ, արքային վայել գլուխ է տալիս, մատուցանում է իւր թագաւորի ուղարկած գիրը և մի կողմ կանգնում. Տիգրանը՝ փոխադարձ սիրոյ խօսքեր ուղղելով Աժդահակի հասցէին, գոհունակութիւն է յայտնում, որ մեծ թագաւորը իրեն յիշել է, բարի է գէպի ինքը: Բարի գալուստ մաղթելով դեսպանին, արձակում է, կարգադրելով՝ որ առժամանակ մնայ, հանգստանայ, մինչև որ ինքը թղթի պատասխանն էլ կհրամայէ պատրաստել ու յետ կողարկէ նրան:

Դեսպանի հեռանալուց յետոյ նա ծանօթանում է գրի բովանդակութեան: Իմաստուն թագաւորն անմիջապէս վճիռ չի տալիս. արձակում է խորհրդականներին, որ ինքը նախ լամտածէ Աժդահակի առաջարկութեան մասին. խորհուրդ անի նախ իւր քրոջ և ապա խորհրդականների հետ ու յետոյ միայն վճիռ տայ:

Տիգրանուհին անտեղեակ էր պալատում անցած դարձածին, իրեն յատկացրած սենեակում անհոգ կեանք էր անցկացնում ապագայ բախտի մասին երազելով, երբ սիրելի եղբայրը յայտնեց Աժդահակի առաջարկութիւնը: Նոր չէր հայ թագաւորների համար այդ տեսակ առաջարկութիւնը, նրանք արդէն սովոր էին օտար թագաւորական տանից աղջիկ առնել և աղջիկ տալ: Տիգրանն ինքը յայտնեց իւր համաձայնութիւնը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանը մարաց օգնութեամբ էր ազատուել Ասորեստանի լծից և թագաւորութեան պատուի հասել, որ այդ ժամանակից սկսած հայ թագաւորները միշտ հաշտութեան դաշն էին կապում Մարաստանի հետ երկրի խաղաղութեան համար: Քոյրը հնազանդ էր իւր միակ խնամակալ եղբօրը և ինքն էլ իւր համաձայնութիւնը տուեց:

Ապա Տիգրանը իւր խորհրդականների հետ էլ խօսելով որոշեց ընդունել Աժդահակի առաջարկը և հրամայեց վայելուչ պատրաստութիւններ տեսնել՝ ճոխ զգեստներ, արդուզարդ Տիգրանուհու համար, այլ և Հայաստանի նժոյգներ Աժդահակի համար նուէր և այլ գանձեր. նշանակեց իշխաններ, որ ուղեկցեն քրոջը Մարաստան Աժդահակի դեսպանի հետ. այլև նշանակեց ծառաներ, որոնք պէտք է Տիգրանուհու հետ

զնային և միշտ նրան ծառայէին: Այսպէս մեծ փառքով ու շքով Տիգրանուհին ճանապարհ ընկաւ Մարաստան:

Աժդահակն առաջուց լսելով Տիգրանուհու գալը, հրամայեց քաղաքում փառաւոր ընդունելութիւն ցոյց տալ, զօրքեր և իշխաններ ընդառաջ ուղարկեց. ցնծութեամբ ու մեծ պատուով ընդունեց իւր պալատում Աժդահակը Տիգրանուհուն: Եղբօր նման և էլ աւելի գեղեցիկ էր Տիգրանուհին, լսելօք, հասկացող, համեստ: Նա իւր վարուեցողութեամբ, իւր նիստ ու կացով ու դատողութիւններով կարողացաւ կարճ ժամանակում սիրելի դառնալ բոլորին:

Աժդահակը նրան իւր կանանց մէջ տիկնանց տիկին, առաջին թագուհի հրատարակեց: Հրամայեց բոլոր խորհրդականներին և պալատականներին լսել Տիգրանուհու ամեն մի հրամանին, հնազանդուել նրան, ինչպէս իրեն են հնազանդում: Ինքն էլ ոչ միայն ընտանեկան խնդիրներում էր նրան լսում, այլ աւելի ևս զրաւելու համար առանց նրա խորհրդի պետութեան ծանր հարցերը չէր վճռում. Տիգրանուհու կամքը վճռական էր բոլոր խնդիրներում: Այսպիսով Տիգրանուհու դիրքն աւելի էր մեծանում և փառքը շատանում. իւր նոր հայրենիքում այսպիսի քնքոյշ, հոգատար խքամքով շքրջապատուած լինելով նրա մէջ հայրենիքի կա-

րօտը մասամբ մեղմանում էր: Այսպէս խաղաղ օրեր էին անցնում մինչև այն ժամանակ, երբ իմաստուն թագուհին նկատեց, որ Աժդահակը անկեղծ չէ իւր այդ վերաբերմունքի մէջ, որ ինչ որ դիտաւորութիւն ունի, որը առայժմ շինծու միջոցներով աշխատում է քօղարկել: Թէ ինչ էր այդ միտքը, Տիգրանուհին առայժմ չէր կարողանում որոշել, մինչև որ ինքը առիթը ներկայացաւ և ամեն բան պարզուեց:

6.

Բաւական ժամանակ էր անցել այն օրից, երբ Տիգրանուհին Մարաստանի թագուհի էր դարձել. Աժդահակն աւելի ու աւելի պարզ էր սկսել իւր գաղտնիքը բանալ: Խելօք թագուհին հասկանում էր այժմ ամեն բան, բայց ցոյց չէր տալիս, մինչև որ խնդիրը բոլորովին պարզուի: Մի օր էլ Աժդահակը բաց է ի բաց յայտնեց իւր միտքը, այն ձևով, որ գուցէ փառասէր և միամիտ կլինը խաբուէր այդ խօսքերից, նախանձը շարժուէր և ամեն բան մոռանար: „Դու միթէ չգիտես, ասաց Աժդահակը, որ քո եղբայր Տիգրանը զրգուել է մեր դէմ. նրա կլինը՝ Չարուհին, ցանկանում է Մարաստանի թագուհի լինել, նախանձում է քո փառքին: Ի՞նչ պիտի լինի ուրեմն դրա հետևանքը, եթէ ոչ այն, որ

նախ ինձ կսպանեն, ապա քեզ կզրկեն իշխանութիւնից և Չարուհին կդառնայ տիկնանց տիկին ու աստուածների մէջ տեղ կբռնի: Այժմ դու ինքդ մտածիր և ընտրիր՝ կամ եղբայրստէր մը նալով խայտառակ կործանումն ունենալ և կամ՝ քո անձիդ օգուտը ճանաչելով՝ շահաւէտ խորհուրդ տուր և մտածիր ապագայի մասին»: Տիգրանուհին լուռ լսում է խորամանկ Աժդահակին, լաւ հասկանում է նրա մտքի շար խորհուրդը, նրա սիրտը յուզում է եղբօր համար, զգում է, թէ ի՞նչ նենգ մարդու ձեռք է ընկել ինքը, սակայն խոհեմութիւնն այնքան մեծ է լինում, որ մի առ ժամանակ լռում է, այնպէս է ցոյց տալիս թէ ինքը հաւատարիմ է Աժդահակին:

Թագաւորի լիակատար վստահութիւնը գրաւելով, Տիգրանուհին հանգիստ չի քնում. նա իմանում է, որ Աժդահակը կարող է յանկարծ ծուղակի մէջ ձգել Տիգրանին, ուստի օր ու գիշեր հնար է մտածում եղբօրը վտանգից ազատել, վերջապէս նա կարողանում է հաւատարիմ մարդու միջոցով Աժդահակի շար միտքը յայանել եղբօրը:

Առաջին անգամը չէր, որ Տիգրանուհին մարդ էր ուղարկում Տիգրանի մօտ. հայրենիքից ու ազգականներից բաժանուած լինելով, նա իւր կարօտն առնում էր միշտ մարդ ուղարկելով, իւր մասին տեղեկութիւն էր հաղորդում և հա-

յոց աշխարհից, եղբօրից, ազգականներից լուրեր ստանում: Ուրախանում էր Տիգրանը, երբ լսում էր, որ քոյրը լաւ վիճակի մէջ է, մեծ պատիւ ու փառք ունի, որ նրա խօսքը օրէնք է դարձել և նրա կամքին հակառակող չկայ:

Մակայն այս անգամ Տիգրանուհու դեսպանը շարագուշակ լուր բերեց Մարաստանից. «Աժդահակը խորամանկութեամբ ուզում է քեզ սպանել, չը լինի թէ խաբուես ու ծուղակն ընկնես», այս էր որ Տիգրանուհու հաւատարիմ ծառան յայանեց Տիգրանին: Տիրեց Տիգրանը այս խօսքերը լսելով. տիրեց մինչև հոգու խորքը, ոչ այնքան իր համար, որքան իւր սիրելի քրոջ, որ ընկել էր այնպիսի դաժան մարդու ձեռքը և այժմ փակուած է պալատում ու հեռու իրանից: Ի՞նչ անէր, ի՞նչպէս խնդիրը լուծէր. նա որոշեց այլևս չծածկել Աժդահակի գաղանիքը, այլ յայտնել առաջին պատահած յարմար ըստէին և գէնքով լուծել այն հարցը, որ Աժդահակն ուզում էր խորամանկ ու կեղծ ճանապարհով վճուել:

Առիթն ինքն իրեն ներկայացաւ. Աժդահակը Տիգրանուհուց ծածուկ մարդ է ուղարկում Տիգրանի մօտ և հրաւիրում՝ գալ երկու տէրութիւնների սահմանամէջը տեսակցութեան մի այնպիսի դործի համար, որը, իբր թէ, կարելի չէ ոչ գրով, ոչ մարդի միջոցով յայանել: Այդ տեսակցութիւնը բարեկամական պիտի լինէր և

Աժդահակը հաւատացած էր, որ Տիգրանը միամիտ լինելով, առանց մեծ զօրքի կգայ, հետն ունենալով միմիայն մի քանի հեռուորդներ, պահպաններ ու իշխաններ: Աժդահակը դիմամբ այնպէս ժամանակ էր ընտրել, երբ Կիւրոսը զբաղուած էր օտար ցեղերի դէմ պատերազմներ մղելով և չէր կարող անմիջապէս օգնութեան գալ: Տիգրանին գերի բռնելուց յետոյ Կիւրոսն էլ կթուլանար և Աժդահակը նրան էլ կյաղթէր հեշտութեամբ. ահա ինչպէս էր մտածում Մարաստանի թագաւորը:

Տիգրանը յետ է ուղարկում Աժդահակի դեսպաններին, հրամայում է յայտնել իրենց թագաւորին, որ իրեն յայտնի է նրա խորամանկութիւնը և որ ինքը կգայ այն, բայց ոչ տեսութեան, այլ պատերազմի: Նա անմիջապէս մարդ է ուղարկում Կիւրոսի մօտ, որ թողնէ իւր պատերազմները և գայ իրեն օգնութեան՝ Աժդահակի դէմ պատերազմելու: Ինքն էլ իւր կողմից պատրաստութիւն է տեսնում. առնում է իւր զօրքը, այլևհապատովկացոց, Վրաց և Աղուանից աշխարհներից զօրք հաւաքում ու պատերազմի ելնում:

Սակայն Տիգրանը չէր կարող միանգամից վճռական պատերազմի դիմել, որովհետև իւր սիրելի քոյրը դեռ Մարաստանում էր, նա մրտածում էր, չը լինի թէ արիւնարբու Աժդահա-

կը մի փորձանք բերէ Տիգրանուհու գլխին: Տիգրանն աշխատում էր մի կերպ քրոջը փախցնել, որի համար էլ հինգ ամիս շարունակ պատերազմը յետաձգում էր: Հայ քաջերի մի խումբ վերջապէս կարողացաւ իրենց սիրելի թագաւորի կամքը կատարել:

Տիգրանուհին ինքն էլ վաղուց պատրաստութիւն էր տեսնում փախչելու, որովհետև Աժդահակն այլևս նախկին ձևով չէր վարում նրա հետ, թագաւորը կասկածում էր միշտ և կարող էր վնասել: Տիգրանուհին իւր հաւատարիմ մարդկանց միջոցով վերջապէս կարողանում է հայ քաջերի հետ պայմանաւորուել և մի մութ գիշեր, երբ ամեն բան պատրաստ էր, փախչում է թագաւորի մօտից և յաջողութեամբ հասնում է սիրելի եղբոր մօտ:

Այժմ Տիգրանն աւելի համարձակ է գործի դիմում, որովհետև առաջուայ նման ձեռն ու ոտը կապուած չի գգում: Սկսում է սոսկալի պատերազմը: Մարաց զօրքը հայ զօրքից պակաս չէր զրահաւորուած և թուով աւելի մեծ էր: Տիգրանն ինքն էր առաջնորդում իւր զօրքերին, ինչպէս և Աժդահակը՝ մարաց զօրքին: Կոտորածը երկու կողմից մեծ էր. անթիւ քաջեր էին ընկնում արիւնոտ դաշտում: Տիգրանը իւր թիկնապահներով պատերազմի տաք տեղերն էր ընտապում և միշտ հետամուտ էր, որ Աժդահակին

բռնէ, որովհետեւ սրան սպանելով և իւր վրէժը կըլուծէր և յաղթութիւնը կտանէր: Վերջապէս Տիգրանը հանդիպում է նրան. իւր երկար նիզակն այնպէս է խրում շամփրի նման Աժդահակի կուրծքը, որ Աժդահակն իսկոյն մեռնում է: Մարաց զօրքը իրենց թագաւորի սպանուելը տեսնելով, վհատուում, թողնում ու փախչում է: Տիգրանը հալածում է նրանց և յաղթութիւնը կատարեալ է դարձնում:

Մեծ փառքով ու աւարով դառնում է Տիգրանը. նրա այս նշանաւոր յաղթութիւնից յետոյ հայ քաղերի համբաւը աւելի է տարածւում. Հայաստանի թագաւորութիւնն աւելի է բարձրանում օտարների աչքում: Մարաստանը իւր երկրի հետ միացնում է Կիւրոսը, իբրև Աժդահակի թուր և ժառանգը: Տիգրանը իւր քրոջն ուղարկում է իւր անունով շինած Տիգրանակերտ քաղաքը, այնտեղ թագուհուն վայել ձևով ապրելու: Այստեղ Տիգրանուհին մնում է մինչև վերջը: Սրա սերունդները բազմանում են և վերջը կազմում մի նախարարութիւն Ոստան նախարարութիւն անունով, որ նշանակում է թագաւորական ցեղից առաջ եկած նախարարութիւն: Տիգրանն այն պատերազմում գերի էր վերցրել Աժդահակի առաջին կնոջը՝ Անոյշին, միւս կանանց և երեխաներին այլ և 10,000 մարացի, որոնց հրամայում է բնակեցնել Մասի-

սի արևելեան ստորոտում, մինչև Գողթան գաւառի սահմանները, զանազան աւաններում, նաև Երասխի ափին շինած քաղաքներում և գիւղերում մինչև Նախիջևան: Աժդահակի կին Անոյշին անխնամ չի թողնում. նրա համար նշանակել է տալիս ծառաներ նոյն գերիներից, որ երբեմն թագուհու փառքով ապրած կիսն այժմ դժուարութիւնների մէջ չընկնի: Մարաստանի այս գաղթականութիւնից յետոյ կազմւում է մի հզօր նախարարութիւն՝ Վիշապագուն կամ Մուրացան անունով: Վիշապագուն նշանակում է վիշապից առաջ եկած. այսպէս էին կոչում, որովհետև Աժդահակ մեր լեզուով նշանակում է վիշապ:

Աժդահակի սպանութեամբ ցանկալի խաղաղութիւնը դեռ չի հաստատուում: Լիզիացոց Կրեստոս թագաւորը, որ Աժդահակի մի այլ կնոջ եղբայրն էր, կամենում է վրէժ լուծել իւր փեսայի սպանութեան համար: Կրեստոսը յայտնի էր իւր անբաւ հարստութեամբ. նրա գանձարանի հարստութեան համբաւն ամեն տեղ տարածուել էր, և շատերը գալիս էին նրան տեսութեան: Կիւրոսը Կրեստոսի դէմ պատերազմելու համար այժմ էլ ինքը Տիգրանի օգնութեան դիմեց. Տիգրանը զօրք ուղարկեց: Պատերազմը խիստ էր և երկար տևեց. ձմեռը վրայ հասաւ. Կրեստոսը իւր զօրքի մեծ մասն արձակեց, որ գարնանը նորից

հաւաքի, իսկ փոքր մասով ինքը փակուեց Սարգէս քաղաքում: Կիւրոսն այս լսելով, յարձակուեց Կրեսոսի վրայ ու նրան գերեց: (550 թ. Ք. ա.):

Պատերազմների յաղթութեամբ տարուած ու ողբերգութեամբ Կիւրոսը հետգհեաէ տիրում էր իւր շրջապատի երկիրներին. մնացել էր միայն Բաբելոնի թագաւորութիւնը, որի դէմ էլ արշաւանք սկսեց: Այս անգամ էլ մեր Տիգրանի օգնութեանը դիմեց: Բաբելոնի դէմ մղած պատերազմը նշանաւոր էր և յաջող ելք ունեցաւ Կիւրոսի համար: Բաբելոնում մօտ 70 տարի գերի էին մնացել բազմաթիւ հրէաներ, որոնց բաբելոնական թագաւորները գերել, բերել էին. սրանց բոլորին էլ Կիւրոսն ազատեց: Հրէից համար այս պատերազմը մեծ նշանակութիւն ունեցաւ, ուստի Երեմիա մարգարէն իւր գրքում գրում է. «Հրաման առէք այդ երկրի (Բաբելոնի) վրայ. փող փչեցէք ուրիշ երկրի ազգերի մէջ. գնդեր հրաւերիցէք դրա վրայ. իմ կողմից պատուէր տուէք Այրարատեան թագաւորութեան, Ասքանազեան գնդին. ելէք ի վերայ» (Ծա. գլ. 27 հմ). Պարսկաստանից յետոյ Հայաստանն այդ ժամանակ արևելքի միակ անկախ և ուժեղ պետութիւնն էր: Նրա քաջութեան, մեծութեան համբուն հասել էր մինչև Հրէաստան. հրէից մարգարէն օգնութեան է կանչում Արարատեան թագաւորութիւնը: Այս էլ մի ապացոյց է, թէ ինչպիսի մե-

ծութեան էր հասցրել Տիգրանը հայոց թագաւորութիւնը:

45 տարի թագաւորելուց յետոյ մեռաւ Տիգրանը. իւր երկիրը հասցնելով այնպիսի մեծութեան, որին գեռ երբէք չէր հասել: Ժողովուրդը դառնապէս ողբաց իւր սիրելի թագաւորի մահը:

Տիգրանը իւր Զարուհի կնոջից ունէր երեք որդի՝ Բաբ, Տիրան և Վահագն: Սրանց մէջ ամենից քաջն ու անուանին էր Վահագնը, որը և անցնում է հօր տեղը և երկիրը խաղաղութեամբ կառավարում: Սա այնպիսի մեծ հսկայական ոյժի տէր է լինում, այնպիսի քաջազորութիւններ է անում, որ ժողովուրդը վերջը իւր աստուածներին շարքն է դասում, համարելով նրան ոչ թէ մարդուց, այլ աստծուց ծնուած: Ինչպէս յունաց Հերկուլէսը, այնպէս էլ մեր Վահագնը, ժողովրդի աւանդութեան համաձայն, վիշապների, հրէշների դէմ կռիւներ է մղում, յաղթում է բոլորին ու ոչնչացնում: Ժողովուրդը իւր այս սիրելի թագաւորի մասին ևս երգեր է կազմում, որից մէկը, ինչպէս մեր երանելի պամահայր Մովսէս Խորենացին ասում է, ինքը իւր ժամանակ (Քր. յետոյ Ե. դարում) իւր ականջով լսել է: Ահա թէ ինչ էր երգում ժողովուրդը. (Վոխազը. Յով. Յովհաննիսեանի).

«Երկնեց երկին և երկիր,
Երկնեց և ծով ծիրանի,

եւ եղէզնիկը կարմիր
երկնեց ծովում ծիրանի:

Ծուխ է դուրս գալիս եղեգան փողից,
Բոց է դուրս գալիս եղեգան փողից,

Բոց է պատել կարմիր եղէզնիկ,
Բոց է դարձել և ծով ծիրանի.

Կարմիր բոցիցն անա մի մանկիկ
Վահագն անա՛ մանուկ գեղանի:

Բոց մօրուքով,

Հուր շրթունքով,

Հուր հեր գլխին հրեղէն պսակ,

Եւ աչերն են գոյգ արեգակ»:

Վահագնի ցեղից յետոյ կազմուում է Վահունեանց նախարարութիւնը, որը քրմութեան պաշտօն ունէր տաճարներում աստուածներին զոհ էր բերում և ծառայում էր:

Վահագնից յետոյ, ինչպէս երևում է, մեր երկիրը խաղաղութիւն է վայելում: Տիգրանի հաստատած կարգ ու կանոնը ուժեղ էր և հիմնաւոր, հայ զօրքի զօրութիւնը այնպէս էր ազդել շրջակայ պետութիւնների վրայ, որ հայերին այլ ևս չէին համարձակում անհանգստացնել: Մասամբ այդ է պատճառը, որ Վահագնից յետոյ եկող մեր միւս հայկազեան թագաւորների մասին տեղեկութիւններ չի տալիս մեզ մեր պատմութեան հայրը՝ Խորենացին. յիշում է մի-

այն անուաները. սրանք են. Առաւան, Ներսէհ, Զարէհ, Արմոզ, Բագամ, Վան: Սա Շամիրամ թագուհու շինած քաղաքը Բզնունեաց ծովի ափին վերանորոգում է, որն այնուհետև նրա անունով կոչւում է Վան, որը մինչև այսօր էլ կայ: Վանին յաջորդում է Վահէն: Սա լինում է Հայկազանց տոհմի վերջին թագաւորը: Տիգրանից սկսած հայ թագաւորները անխախտ պահում էին հաշտութեան դաշն Պարսկաստանի հետ, որ այդ ժամանակ ամենամեծ և ուժեղ պետութիւնն էր. Վահէն ևս կապել էր այդ դաշինքը և հաւատարիմ էր իւր ուխտին:

Չորրորդ դարու վերջերում արևմուտքում Մակեդոնիայում մեծ փոփոխութիւն էր առաջ եկել, որի հետևանքն եղաւ այն, որ մի կողմից շատ մանր-մունր պետութիւններ կործանուեցան, միւս կողմից միմեանց կուլտուրայով երկու տարբեր աշխարհներ՝ արևելքը և արևմուտքը՝ յունական-մակեդոնական և ասորա-բաբելական-պարսկական աշխարհները միմեանց հետ շփուեցան, մի բան որ առաջ չկար: Հայաստանն այնուհետև կառավարւում է օտարազգի կուսակալներով, որոնց նշանակում էին նախ Մակեդոնական, ապա Սելևկեան տան թագաւորները: Ժամանակը խառն էր և շփոթ, կարգերը խանգարուած: Դարձեալ կեղեքումն, դարձեալ հարստահարութիւն:

Մօտ երեք հարիւր տարի տեց չայկազեան թագաւորների իշխանութեան շրջանը և այդ ժամանակամիջոցում Հայաստանն արտաքին ու ներքին մեծ բարեկարգութեան հասաւ շնորհիւ մեր եռանդուն ու խելօք թագաւորների կառավարութեան: Այդ ժամանակուայ մեր երկրի կարգ ու կանոնը, սովորութիւնները, բարքն ու վարքը, հաւատալիքը մեծ մասամբ նման են շրջակայ երկիրների մեծ պետութիւնների, այն է Ասորեստանի, Բաբելոնի, Մարաստանի և Պարսկաստանի մէջ եղածներին, որովհետև հայերը յաճախ դրանց իշխանութեան տակ են եղել և, որ գլխաւորն է, միշտ յարաբերութեան մէջ էին դրանց հետ: Հայկազանց թագաւորների գլխաւոր արժանիքն այն էր, որ երկիրը ազատեցին օտարների լծից, ապա խողաղութիւն հաստատեցին, ժողովրդի մէջ և երրորդ՝ զինուորական կարգ ու կանոն մտցրին, հայոց զօրքի թիւն աւելացրին, քաջութեան համբաւը մեծացրին:

Ընկաւ Հայկազանց տոհմը, նրա հետ միասին կորաւ և առժամանակ Հայաստանի անկախութիւնը: Մեր պատմութեան համար սկսուեց մի նոր շրջան, մեր կուլտուրայի զարգացման համար մի բոլորովին նոր ճանապարհ բացուեց: Մինչև այդ հայերն արևելքի ժողովուրդների հետ էին շփուում և նրանցից փոխ առնում, իւրացնում շատ բան, այժմ սկսում են արևմուտքի հետ յարաբերութիւն ունենալ և նոր սովորութիւններ, կարգեր իւրացնել:



- 20. Մամիկոնեան իշխաններ Մուշեղ և Մանուկ — Մ. Բ. Ղազարեանի — ր. 30 կ.
- 21. Միքայէլ Նարանդեանի տնտեսական թէօրիան—Եր. Պաշեանի — „ 25 „
- 22. Անասնապահութիւն—Ի. Բ. Լիւբովուչիովի (Թարգման.) Մասն I—Ընտ. կենդան. խնամքը և հիւանդութ. պաշտ. միջոցն — „ 30 „
- 23. Անասնապահութիւն—Նոյնի. Մասն II և III—Ընտանի կենդանիների վարակիչ և ոչ-վարակիչ հիւանդութիւնների մասին — „ 50 „
- 24. Ի՞նչ տիպի ստորին և միջնակարգ դպրոցների կարիք ունի ներկայումս Անդրկովկասը—Կ. Յ. Մասիսեանի — „ 15 „
- 25. Հայկազանց թագաւորներ Ի. Տէր Ղազարեան — „ 15 „
- 26. Голубь—Ս. Չախարեանի — „ 30 „
- 27. Կանոնագիր շտեմարան. գանձարանի—Ս. Չախարեանի — „ 2 „
- 28. Վարկատու ընկերութեան կանոնադրութիւն (փոխադրութիւն) — „ 30 „
- 29. Հոցահատիկների մարդային կուլտուրան—Կ. Ղարազեօզեանի — „ 5 „
- 30. Ի՞նչ բան է գէմսոլօն—Ի. Բեղոսիսկու (Թարգմանութիւն) — „ 5 „
- 31. Ինձ մի խնդրիր—բոմանս. խօսք Յ. Թումանեանի, ներդաշնակութիւն Ա. Մայիշեանի — „ 40 „
- 32. Ոգի Հայաստանի—գունատիպ նկար — „ 50 „
- 33. Արտաշէսի յուզարկաւորութիւնը—գունատիպ նկար — „ 25 „

Պահեստը գտնուում է Միուրեան գրասենյակում:
 Закуплен в Баку, Армянский Культурный Союзь.



Երևանի սպարա Բազմ.

ԳՐԱՆԷ 15 ԿՈՊ.

189.